ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2024 թվականի N: 620 -Ա քաղաք Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԳՆՄԱՆ, ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԴԱՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՄԱՆՈՐՅԱ ԴԵԿՈՐՆԵՐԻ ՆՈՐԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի հոկտեմբերի 28-ին ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Բալասանյան» դաշինքի ավագանու անդամները ողջ կազմով վայր են դրել մանդատները, որից հետո համայնքի ավագանու նիստեր չեն գումարվում՝ որոշումներ չեն կայացվում՝ քվորում չապահովելու պատճառով:

Իսկ 2024 թվականի հոկտեմբերի 29-ին Գյումրու համայնքի ղեկավարը և Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալները ազատվել են իրենց պաշտոններից:

Վերոգրյալով պայմանավորված համայքապետարանը հայտնվել է արտակարգ և չնախատեսված իրավիճակում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դ. Խուդաթյանի 2024 թ. դեկտեմբերի 2-ի թիվ ԴԽ/20.1/39126-2024 հանձնարարականով ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր տոնածառի գնման, տեղադրման և զարդարման, ինչպես նաև ամանորյա դեկորների նորով փոխարինման և վերանորոգման աշխատանքները իրականացվելու են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի միջոցով:

Քանի որ մոտենում են ամանորյա տոները, և չնախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, չնախատեսված իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր տոնածառի գնման, տեղադրման և զարդարման, ինչպես նաև ամանորյա դեկորները նորով փոխարինման և վերանորոգման աշխատանքները իրականացնել մեկ անձից գնման ընթացակարգով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթը:

2. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր տոնածառի գնման, տեղադրման և զարդարման, ինչպես նաև ամանորյա դեկորների նորով փոխարինման և վերանորոգման

աշխատանքների կատարման համար հրավեր տրամադրել միայն գնման հայտում նշված անձին՝ հնարավոր մասնակցին՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին մասի դ)-ենթակետի դրույթը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է